Հավելված
ՀՀ վարչապետի 2019 թ.
դեկտեմբերի 24 -ի N 942 - Ա
որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՀԻՆ ԹԱՏՐՈՆԻ ՇԵՆՔԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ, ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակը Գյումրի քաղաքում Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն ուսումնական ծրագիր իրականացնելու նպատակով հին թատրոնի շենքի և հարակից տարածքի վերակառուցման, վերանորոգման և բարեկարգման աշխատանքներ իրականացնելն է:
2.	Ծրագիրը բարեգործական որակելու նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում՝ օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով՝ օրենքով սահմանված արտոնություններից:

3.	Բարեգործը	Ծրագիրն իրականացվելու է տարբեր ֆիզիկական անձանց և ոչ առևտրային կազմակերպությունների կողմից ստացվող հանգանակությունների, նվիրատվությունների և նվիրաբերությունների հաշվին:
4.	Ծրագիրը կատարողը	Ծրագիրն իրականացվելու է «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ 01245672, ՀՀ, քաղ. Երևան, Հալաբյան 16, գրանցման թիվը՝ 222.160.01143, վկայական՝ 03Ա086142)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Ծրագիրն իրականացվելու է քաղ. Գյումրի, Շչորսի փողոց թիվ 1 հասցեում, քաղաքաշինության ոլորտում:
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմելու է 2239000000 (երկու միլիարդ երկու հարյուր երեսունինը միլիոն) դրամ:
7.	Բարեգործություն ստացողը	Ծրագրի շահառուն Գյումրու համայնքն է:

8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրն իրականացվելու է մեկ փուլով՝ 2015 թ. նոյեմբերի 1-ից մինչև 2020 թ. դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի շրջանակում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝ . ճարտարապետական, չափագրման, ինժեներական, դիզայներական և այլ նմանատիպ աշխատանքների իրականացում և աշխատանքային նախագծերի համաձայնեցում, թողարկում և հաստատում՝ 200000000 (երկու հարյուր միլիոն) դրամ՝ 01.11.2015 թ.-ից մինչև 31.12.2017 թ., . շինարարական և բարեկարգման աշխատանքների իրականացում՝ 1927000000 (մեկ միլիարդ ինը հարյուր քսանյոթ միլիոն) դրամ՝ 01.04.2016 թ.-ից մինչև 31.12.2020 թ., . շինարարական և բարեկարգման աշխատանքների ընթացքի տեխնիկական և հեղինակային հսկողություն, խորհրդատվական ծառայությունների

		ստացում, փաստագրման, հատակագծման և գրանցման աշխատանքների իրականացում՝ 80000000 (ութսուն միլիոն) դրամ՝ 01.04.2016 թ.-ից մինչև 31.12.2020 թ., . աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ՝ 24000000 (քսանչորս միլիոն) դրամ՝ 01.01.2016 թ.-ից մինչև 31.12.2020 թ., . գործուղման ծախսեր՝ 6000000 (վեց միլիոն) դրամ՝ 01.01.2016 թ.-ից մինչև 31.12.2020 թ., . գրասենյակային և այլ ծախսեր՝ 2000000 (երկու միլիոն) դրամ՝ 01.01.2016 թ.-ից մինչև 31.12.2020 թ.,
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	. ճարտարապետական, չափագրման, ինժեներական, դիզայներական, փաստաթղթերի թողարկման, նախագծերի իրականացման աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում ՀՀ-ից՝ 15000000 (տասնհինգ միլիոն) դրամ՝ 01.11.2015 թ.-ից մինչև 31.12.2017 թ., . ճարտարապետական, չափագրման, ինժեներական, դիզայներական, փաստաթղթերի թողարկման, նախագծերի իրականացման աշխատանքների և

		ծառայությունների ձեռքբերում արտերկրից՝ 185000000 (մեկ հարյուր ութսունհինգ միլիոն) դրամ՝ 01.11.2015 թ.-ից մինչև 31.12.2017թ., . շինարարական և բարեկարգման նյութերի և աշխատանքների ձեռք- բերում ՀՀ-ից՝ 1327000000 (մեկ միլիարդ երեք հարյուր քսանյոթ միլիոն) դրամ՝ 01.04.2016 թ.-ից մինչև 31.12.2020 թ.: Մինչև 2019 թ. նոյեմբերի 30-ը ընկած ժամա- նակահատվածում հիմնադրամը սույն հոդվածով ստացել է հետևյալ գործարք- ների նկատմամբ արտոնություն, որոնք կամ ավարտված են կամ դեռ գտնվում են կատարման ընթացքում՝ . «Մեծն Էրիկ» ՍՊԸ՝ 850,970,320 դրամի շին աշխատանքներ, . «Արարատցեմենտ» ՓԲԸ՝ 112,400,000 դրամի ցեմենտ, . «Ինթեք Էլեկտրիկ» ՍՊԸ՝ 27,513,000 դրամի էլ. ապրանքներ . «Ինթեք Էլեկտրիկ» ՍՊԸ՝ 44,843,300 դրամի էլ. ապրանքներ , «Մեծն Էրիկ» ՍՊԸ՝ 15,597,319 դրամի շին. աշխատանքներ, . «Լիա Կաֆ» ՍՊԸ՝ 2,866,667 դրամի շին. նյութեր, . «ԱՍԷԴԼ» ՍՊԸ՝ 13,070,000 դրամի շին. նյութեր,

		. «ԱՍԷԴ» ՍՊԸ՝ 455,000 դրամի շին. նյութեր, . «ՏՈՐ» ՍՊԸ՝ 359,570 դրամի շին. նյութեր, . «ՏԻՏԱՆ» **Ս**ՊԸ՝ 551,220 դրամի շին. նյութեր, . «ԿԱՐԻՆ» ՍՊԸ՝ 292,500 դրամի շին. նյութեր, . «Վալիռով» ՍՊԸ՝ 82,917 դրամի շին. նյութեր, . «Լեգիոն Պարիսպ» ՍՊԸ՝ 14,075,000 դրամի շին. աշխատանքներ, . «Ինթեք Էլեկտրիկ» ՍՊԸ՝ 668,460 դրամի էլ. ապրանքներ, . «Ինթեք Էլեկտրիկ» ՍՊԸ՝ 122,100 դրամի էլ. ապրանքներ, . «Պրոֆալ» ՍՊԸ՝ 500,000 դրամի աշխատանքներ, . «Էներգովեստ» ՍՊԸ՝ 44,027,200 դրամի շին. աշխատանքներ, . «Մեծն Էրիկ ՍՊԸ՝ 37,077,641 դրամի շին. աշխատանքներ, . «Էներգովեստ» ՍՊԸ՝ 540,000 դրամի շին. աշխատանքներ, . «Էներգովեստ» ՍՊԸ՝ 605,000 դրամի շին. աշխատանքներ, . «Գամմա Էլեկտրիկս» ՍՊԸ – 5,549,940 դրամի շին. աշխատանքներ, . «Սոլիդ Մակերես» ՍՊԸ՝ 14,601,600 դրամի շին. աշխատանքներ,

		. «ԱրմենԼիֆտ» ՀՁ» ՍՊԸ՝ 3,250,000 դրամի շին. աշխատանքներ, . «Պրոֆալ» ՍՊԸ՝ 20,400,000 դրամի շին. աշխատանքներ, . «Արտեզիա» ՍՊԸ՝ 8,938,907 դրամի շին. աշխատանքներ, . «Ինթեք Էլեկտրիկ» ՍՊԸ՝ 5,712,000 դրամի էլ. ապրանքներ, . «Այլ՝ 1,467,861 դրամի շին. նյութեր: . Շինարարական և բարեկարգման նյութերի և աշխատանքների ձեռք-բերում արտերկրից՝ 600000000 (վեց հարյուր միլիոն) դրամ՝ 01.04.2016 թ.-ից մինչև 31.12.2020 թ.: Մինչև 2018 թ. դեկտեմբերի 24-ը ընկած ժամանակահատ-վածում հիմնադրամը սույն հոդվածով ստացել է հետևյալ գործարքների նկատմամբ արտոնություն, որոնք կամ ավարտված են կամ դեռ գտնվում են կատարման ընթացքում՝ . «Մետալլոտորգ» ԲԸ՝ 182,967,066 դրամի ամրան, . RAK Ceramics՝ 3,379,593 դրամի սանտեխնիկական ապրանքներ, .ITEQ Projects LTD՝ 4,748,550 դրամի եռոտանիներ, . MegaPrefab՝ 19,213,364 դրամի ետ լարված ամրաններ,

		. MegaPrefab՝ 12,258,270 դրամի ետ լարված հաշվարկների իրականացում, . Ventura Global DMCC՝ 16,744,464 դրամի տեսաձայնային և սարքավորումների և ցանցերի նախագծում, . Gebran S. Majdalani EST՝ 10,212,750 դրամի մեխանիկական գծագրերի կազմում, . Bureu d'Etudes Rodolphe Mattar՝ 15,855,656 դրամի կոնստրուկտորական հսկողություն, . Fox wholesale electric & lighting՝ 52,489,086 դրամի էլեկտրական ապրանքներ, . Visa S.P.A ՝ 27,240,650 դրամի գեներատոր՝ աքսեսուարներով, . Tesar S.R.L՝ 5,513,540 դրամի տրանսֆորմատոր՝ աքսեսուարներով, . Erico Europe B.V՝ 4,648,825 դրամի էլեկտրական ապրանքներ, . Tesar S.R.L • Majdalani Engineering and Trading՝ 37,328,055 դրամի ջեռուցման համակարգի խողովակներ,

		. շինարարական և բարեկարգման աշխատանքների ընթացքի տեխնիկական և հեղինակային հսկողության, խորհրդատվական և փաստագրման աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում ՀՀ-ից՝ 60000000 (վաթսուն միլիոն) դրամ՝ 01.04.2016 թ.-ից մինչև 31.12.2020 թ., . շինարարական և բարեկարգման աշխատանքների ընթացքի խորհրդատվական ծառայությունների ձեռքբերում արտերկրից՝ 20000000 (քսան միլիոն) դրամ՝ 01.04.2016 թ.-ից մինչև 31.12.2020 թ., . տրանսպորտային և կացության ծառայությունների ձեռքբերում ՀՀ-ից՝ 5000000 (հինգ միլիոն) դրամ՝ մինչև 31.12.2020 թ., . գրասենյակային պարագաների ձեռքբերում ՀՀ-ից՝ 2000000 (երկու միլիոն) դրամ՝ մինչև 31.12.2020 թ.:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	. աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ՝ 24000000 (քսանչորս միլիոն) դրամ: Նախատեսվում է ձեռք բերել ՀՀ-ից՝ մինչև 2020 թ. դեկտեմբերի 31-ը:

		. Գործուղման ծախսեր՝ 6000000 (վեց միլիոն) դրամ: Նախատեսվում է ձեռք բերել ՀՀ-ից՝ մինչև 2020 թ. դեկտեմբերի 31-ը: . Գրասենյակային և այլ ծախսեր՝ 2000000 (երկու միլիոն) դրամ: Նախատեսվում է ձեռք բերել ՀՀ-ից՝ մինչև 2020 թ. դեկտեմբերի 31-ը:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Աշխատանքային նախագծերը պետք է համաձայնեցվեն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ: Իրականացվելիք աշխատանքների ընթացքում համագործակցություն է նախատեսվում նաև Գյումրու քաղաքապետարանի և ՀՀ քաղաքաշինության կոմիտեի հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ